Մկրտության խոստում

«Ինչո՞ւ ես ուզում մկրտվել», - հարցրեց հայրիկը:

Ջուլեն Քարտեր
(Հիմնված է իրական պատմության վրա:)

Այս պատմությունը տեղի է ունեցել ԱՄՆ-ում:

«Հայրիկ, կարո՞ղ եմ մկրտվել, երբ դառնամ ութ տարեկան»: Հարցրեց Քիթոնը:

Հայրիկը բարձրացրեց հայացքն այն խաղից, որը խաղում էին: «Դա կարևոր ընտրություն է: Ավելի լավ չէ՞ր լինի սպասել մինչև դառնաս 18 տարեկան»:

Քիթոնը մտածեց այդ մասին: «Բայց ես այժմ գրեթե ութ տարեկան եմ: Իսկ 18-ն այնքա՜ն հեռու է»:

Հայրիկը մի պահ լուռ էր: Նա տեղաշարժեց իր խաղանիշը: «Ինչո՞ւ ես ուզում մկրտվել»:

«Ես սիրում եմ Հիսուսին», - ասաց Քիթոնը: «Եվ ես ուզում եմ հետևել Նրան»:

«Դա հրաշալի պատճառ է մկրտվելու համար»,- ասաց հայրիկը: Նա ժպտաց: «Ես կաջակցեմ քեզ, եթե դու այդպես ես որոշել: Անկախ նրանից դու ութ, թե 18 տարեկան ես»:

Քիթոնը գրկեց հայրիկին: «Շնորհակալություն»:

Հայրիկը Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ չէր: Բայց նա դեռ երբեմն եկեղեցի էր գնում Քիթոնի և մայրիկի հետ: Եվ երբ Քիթոնը ելույթ էր ունենում կամ երգում Երեխաների Միության մյուս երեխաների հետ հաղորդության ժողովին, հայրիկը միշտ գալիս էր:

Իրենց խաղն ավարտելուց հետո, Քիթոնը գտավ մայրիկին խոհանոցում

«Հայրիկն ասաց, որ ես կարող եմ մկրտվել, երբ դառնամ ութ տարեկան:

Մայրիկը ժպտաց: «Դա այնքա՜ն հուզիչ է: Մտածե՞լ ես այն մասին, թե ով կկամենայիր, որ քեզ մկրտեր:

Քիթոնը հետևեց Հիսուս Քրիստոսի օրինակին՝ մկրտվելով: Ո՞րն է Փրկչի օրինակին ձեր հետևելու ուղիներից մեկը:

Քիթոնը ափսեները շարեց սեղանին: «Ի՞նչ ես կարծում պապիկը կարող է»: Պապիկը և տատիկը ծառայում էին միսիայում մեկ այլ քաղաքում:

«Մենք կարող ենք հարցնել», - ասաց մայրիկը:

Ճաշից հետո Քիթոնը տեսազանգով կապվեց պապիկի և տատիկի հետ: Մի քանի զանգից հետո, էկրանը լցվեց նրանց ժպտացող դեմքերով:

«Ողջո՜ւյն, տատիկ»: «Ողջո՜ւյն պապիկ»,- ասաց Քիթոնը. «Պատկերացնո՞ւմ եք: Ես պատրաստվում եմ մկրտվել իմ ծննդյան օրը՝ այս տարի»:

«Հրաշալի է», - ասաց Տատիկը:

«Դու ինձ կմկրտե՞ս, պապիկ»,- Հարցրեց Քիթոնը:

Ապա պապիկի ժպիտն ավելի լայն դարձավ: «Ես շատ կցանկանայի»:

Երբ մկրտության օրը եկավ, Քիթոնը պատրաստ էր: Մայրիկն ու հայրիկը նրան մեքենայով տարան մի փոքրիկ հավաքատուն, որին մոտիկ տատիկն ու պապիկը ծառայում էին իրենց միսիան:

Քիթոնը և պապիկը կրում էին սպիտակ հագուստներ: Նրանք նստած էին միասին, մինչ բոլորը երգում էին: Ապա մայրիկն ասաց աղոթքը:

Հետո խոսեց հայրիկը: «Երբ դուք մկրտվում եք, դուք խոստանում եք հետևել Հիսուս Քրիստոսին և պահել Նրա պատվիրանները: Նա ուսուցանեց մեզ սիրել միմյանց: Սերը լավագույն ձևն է ապրելու», - ասաց նա:

Քիթոնը նայում էր Հիսուսի նկարին, որը բռնել էր հայրիկը:

«Երբ մենք սիրում ենք ուրիշներին, դա օգնում է նրանց զգալ, որ իրենց մասին հոգ են տանում: Այն նաև օգնում է մեզ լինել երջանիկ և ունենալ խաղաղություն»: Հայրիկն ուղիղ նայեց Քիթոնին: «Ես հպարտ եմ քեզնով այսօր, որ խոստացար հետևել Հիսուս Քրիստոսին: Հուսով եմ, որ քո մկրտությունը միշտ կհիշեցնի քեզ սիրել Աստծուն և սիրել մյուսներին»:

Քիթոնը ամուր գրկեց հայրիկին: Ապա հետևեց պապիկին դեպի փոքրիկ ջրավազանը: Քիթոնը դրեց իր մեկ ձեռքը պապիկի բազկին, իսկ մյուսը պապիկի ձեռքում: Պապիկն ասաց մկրտության աղոթքի խոսքերը: Հետո նա օգնեց Քիթոնին ջրի մեջ իջնել:

Երբ Քիթոնը դուրս եկավ ջրից, նա ժպտում էր: Նա արեց դա: Նա հետևել էր Հիսուս Քրիստոսին: Նա շուտով նաև կհաստատվեր և կստանար Սուրբ Հոգու պարգևը: Այդ ժամանակ նա կլիներ Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամ:

Քիթոնը ոգևորված էր, որ կարող էր պահել Հիսուսին հիշելու և Նրա պատվիրանները պահելու իր խոստումը: ●

ՆԿԱՐԸ՝ ԱԻԿՈՍ ՈՈՒԹԱՌՆԵՐ